

ՀԱՂՈՐԳՈՒՄՆԵՐ

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԴՈՂՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՈՐԱԿՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

ԱՆԱՏՈՒ ԱՎԱԳՅԱՆ

Մարդկային հասարակության պատմության մեջ գողությունն առավել հին և տարածված հանցագործություններից է: Ահա թե ինչու տարբեր ժամանակների և պետությունների քրեական օրենսդրությունների ու քրեական իրավունքի տեսության մեջ այս պրոբլեմին միշտ էլ հատկացվել է բացառիկ ուշադրություն: Այժմ էլ մեր երկրում քաղաքացիների անձնական գույքի գողության քրեագիտական իրադրությունը մնում է համեմատաբար լարված:

Ցավոք, բարդ և այժմեական այս խնդիրը դեռևս քրեական իրավունքի տեսության և քրեադիտության մեջ քիչ է ուշադրության արժանանում: Եղած ուսումնասիրությունները մեծ մասամբ զուտ տեսական, քրեաիրավական բնույթ են կրում (քաղաքացիների անձնական գույքի գողության հասկացությունը, տեսակները, դրանց տարբերությունները համասեռ մյուս հանցագործություններից, վերջիններիս կատարման համար պատասխանատվությունը և այլն):

ՍՍՀՄ սահմանադրության 13-րդ հոդվածը ոչ միայն հռչակում է անձնական սեփականության իրավունք, այլև երաշխավորում է նրա ռեալ իրականացումը, նշելով, որ քաղաքացիների անձնական սեփականության մեջ կարող են մտնել աշխատանքային եկամուտներն ու խնայողությունները, բնակելի տունը և օժանդակ տնային տնտեսությունը, առօրյա գործածության, անձնական սպառման և հարմարության առարկաները: Քաղաքացիների անձնական սեփականությունը և նրա ժառանգման իրավունքը պաշտպանվում են պետության կողմից: Անձնական սեփականության զարգացումն ու ամրապնդումը համարվում է սովետական մարդկանց նյութական և կուլտուրական կենսամակարդակի հետագա վերելքի անհրաժեշտ նախապայմաններից մեկը, որը ածանցական է սոցիալիստական սեփականությունից և ծառայում է իբրև քաղաքացիների պահանջմունքների բավարարման հիմնական միջոց: Քաղաքացիների անձնական գույքի պաշտպանումը ոտնձգություններից սովետական օրենսդրության կարևոր խնդիրներից է, և պայքարը դրանց դեմ ոչ միայն պետական մարմինների գործն է, այլև ողջ հասարակության:

Յուրաքանչյուր հանրավտանգ արարք չէ, որ կարող է մեղայնացնել նրա կատարողին: Այդպիսին կարող է լինել հանրության համար վտանգավոր և քրեական օրենքով արգելված միայն այն արարքը, որն իր մեջ հանցակազմ է պարունակում, այսինքն՝ հանցագործության բաղկացություն ունի: Հանցակազմն այն նշանների ու տարրերի համակցությունն է, որոնց ուժով մարդկանց գործողությունը քրեական օրենքով չհետապնդվող արարքից վերածվում է հանցագործության: Ամեն մի հանցակազմի մեջ պետք է առանձ-

նացնել. ա) հանցագործության օբյեկտը, բ) հանցագործության սուբյեկտը, գ) հանցագործության օբյեկտի վնասը, դ) հանցագործության սուբյեկտի վնասը:

Քաղաքացիների անձնական սեփականության զոդության հատուկ օբյեկտը քաղաքացիների անձնական գույքն է:

Իրավաբանական գրականության մեջ մի շարք հեղինակներ այն կարծիքն են հայտնել, որ սոցիալիստական և անձնական սեփականության գեմ ուտնձգության առարկա կարող են լինել նաև իրենցից նյութական արժեքներ չներկայացնող, սակայն տվյալ գույքի ստացման իրավունք տվող փաստաթղթերն ու իրերը. օրինակ՝ պահասենյակում գտնվող իրերի ստացման անդորրագիրը, ապրանք ստանալու ապրանքագիրը, դրամարկղի գրքույկը, հանդերձարանի համարը և այլն¹: Մեկ այլ տեսակետով, նշված փաստաթղթերն ու իրերը պետք է դիտել ոչ թե որպես հափշտակման առարկա, այլ՝ միջոց: Օրինակ՝ Տ. Լ. Սերգենևան գրում է. «Փաստաթղթերը չեն, որ որպես այդպիսի կարող են ծառայել հանցագործի անօրինական հարստացման աղբյուր, այլ այն նյութական արժեքները, որոնք ստացվել են այդ փաստաթղթերի օգտագործման նպատակով: Հանցագործի վերջնական նպատակը ոչ թե փաստաթղթերի ձեռքբերումն է, այլ այդ փաստաթղթերով պետական կամ հանրային գույքի անօրինական, ձրիաբար ստանալը: Դրա համար էլ փաստաթղթեր վերցնելը համարվում է հափշտակման նախապատրաստություն»²: Այս տեսակետին է նաև Գ. Ա. Կրիգերը³: Նման դեպքում պետք է այդպիսի փաստաթղթերը բաժանել երկու խմբի՝ ներկայացնողականի և անվանականի: Առաջինները քաղաքացիների անձնական գույքի հափշտակման առարկա են և դրանց հափշտակումը կազմում է զոդության ավարտված հանցակազմ: Այդպիսի արժեքային փաստաթղթեր են սերտիֆիկատը, 30%-ոց փոխառության պատատոմսը, տրանսպորտով երթևեկելու մշտական տոմսը, ֆուտբոլի կամ ներկայացումների հանախման արձեմենտը և այլն: Այլ կերպ պետք է լուծվի հարցը, երբ հափշտակվում են անվանական արժեքային և դրամական փաստաթղթեր. օրինակ՝ անվանական խնայդրամարկղի գրքույկը, գրավատան անդորրագիրը, ինչպես նաև այնպիսի ոչ արժեքային իրեր, ինչպիսիք են հանդերձապահարանի համարը, պահասենյակի ժեռոնը և այլն: Դրանք, մեր կարծիքով, պետք է դիտվեն ոչ թե հանցագործության առարկա, այլ հանցագործությունների կատարման միջոց: Իրանց հափշտակմամբ սեփականատիրոջը դեռևս ռեալ գույքային վնաս չի պատճառվում: Հետևաբար, հափշտակողի արարքը գույքային հանցագործության փորձի շրջանակներից դուրս չի գալիս և այն ավարտված հանցագործություն համարվել չի կարող: Այսպես, անվանական խնայդրամարկղի գրքույկով դրամ ստանալու համար պետք է ոչ սեփականատերը (հափշտակողը) կարողանա ճշտորեն էլքի օրդերի վրա վերարտադրել, կեղծել գրքույկի օրինական տիրոջ ստորագրությունը, որպեսզի հնարավոր դառնա դրամի ստացումը: Եվ քանի որ տվյալ դեպքում դրամի սեփականատերը նյութական պատասխանատվություն կրող

1 Н. Н. Баранов, Расследование краж личного имущества, М., 1977, с. 11.

2 Т. Л. Сергеева, Уголовная охрана социалистической собственности в СССР, М., 1954, с. 29—30.

3 Г. А. Кригер, Ответственность за хищение государственного и общественного имущества по советскому уголовному праву, М., 1957, с. 30—31.

պետական կազմակերպությունն է և հանցագործության ավարտումից հետո նրան նյութական վնաս է պատճառվում, ուստի արարքը պետք է որակել որպես սոցիալիստական գույքի հափշտակում՝ խարդախության միջոցով:

Այն դեպքում, երբ մեղադրյալը հափշտակել է փաստաթղթեր, որոնք շուրեն նյութական արժեք (վկայական, անձնագիր, դիպլոմ և այլն), նրա արարքը ՀՍՍՀ քրեական օրենսգրքի 212 հոդվածով պետք է որակվի բաղաբացիներից ոչ գույքային բնույթի փաստաթղթերի հափշտակություն: Ընդ որում, հարկ է հաշվի առնել, որ երբ մեղադրյալը դիտավորություն է ունենում հափշտակելու դրամ, սակայն դրա փոխարեն սխալմամբ հափշտակում է անձնական փաստաթղթեր, ապա արարքը պետք է որակել գողության փորձ, քանի որ տվյալ դեպքում տուժողին ռեալ գույքային վնաս չի պատճառվում:

Պրակտիկայում լինում են դեպքեր, երբ շահագիտական նկատառումներով կատարվող գաղտնի հափշտակումը գողության հանցակազմ չի տալիս, քանի որ տուժողին գույքային վնաս չի պատճառվում: Օրինակ՝ ՀՍՍՀ քրեական օրենսգրքի 242 հոդվածը սահմանում է, որ «գերեզմանը պղծող գործողություններ կատարելը, ինչպես նաև հուշարձանը կամ գերեզմանների վրա եղած դարդերը ավերելը՝ նույն արարքները, որոնք գողորդված են գերեզմանում գտնվող կամ նրա վրա եղած առարկաների հափշտակության հետևյալ դիպքի անարգանքի ենթարկելը» գողության հանցակազմ չեն տալիս, որովհետև մահացածի հարազատներն ու մոտիկները նրա հետ ղեկավարված այս կամ այն իրը (մատանի, ժամացույց), դրանով նրանք կամավոր տվյալ իրն օտարում են իրենցից: Երա համար էլ այդ արարքն ինքնուրույն հանցակազմ է պարունակում: Հասկանալի է, վերոհիշյալը չի վերաբերվում այն դեպքերին, երբ գույքը հափշտակվում է թեև մահացած, սակայն ղեկ չթաղված հանգուցյալից, օրինակ՝ ավտոթափից կամ ավիացիոն աղետից անմիջապես հետո կատարված հափշտակումը պետք է որակվի որպես անձնական գույքի գողություն:

Այսպիսով, անձնական սեփականության դեմ ուղղված հանցագործության առարկա կարող է լինել միայն այն գույքը, որը չի պատկանում մեղադրյալին:

Գողության հանցակազմի օբյեկտիվ հատկանշական կողմը գույքի գաղտնի հափշտակումն է: Սրա յուրահատկությունն այն է, որ գույքի օտարումը սեփականատիրոջից կատարվում է հակառակ նրա կամքի և համաձայնության: Հափշտակման գաղտնիությունը առավել ցայտուն է արտահայտվում այնտեղ, որտեղ գույքի հափշտակումը կատարվում է առանց ականատեսի: Այդպիսիք են՝ բնակարանային գողությունները (բնակվողի բացակայությամբ), անտերության մատնված իրերի զավթումը և այլն: Գաղտնի է համարվում այն հափշտակումը, որը կատարվում է թեկուզև տուժողի ներկայությամբ, սակայն նրանից աննկատ, այն պահին, երբ տուժողի ուշադրությունը շեղվել է, ինչպես նաև այն հափշտակումը, որը կատարվել է տուժողի ներկայությամբ, սակայն վերջինս այս կամ այն հանգամանքների բերումով չի գիտակցել կատարվածը (օրինակ՝ քնած մարդուց, փոքրահասակից, հոգեկան հիվանդից կամ հարբած մարդուց կատարված հափշտակումը): Հափշտակումը գաղտնի է համարվում նաև այն դեպքում, երբ գույքի հափշտակումը տվյալ պահին տուժողի գիտակցությամբ չի ընկալվում: Օրինակ, երբ տուժողը նկատել է գրպանահատությունը այն ժամանակ, երբ գողը ցան-

կացել է թաքնվել՝ կատարված գաղտնի հափշտակումը դրանով չի դառնում բացահայտ:

Վերևում ասվածը հնարավորություն է տալիս լուծելու հանկարծակի հափշտակման բնույթի հարցը: Վայրկենական զավթումները կարող են որակվել որպես գողություն, եթե տուժողը չի գիտակցել կամ ավելի ճիշտ չի հասցրել գիտակցելու կատարվածի էությունը՝ հայտնաբերելով իրենից գողացված գույքն այն ժամանակ, երբ հափշտակումն արդեն ավարտվել է: Հասախ պրակտիկայում լինում են դեպքեր, երբ տուժողը գիտակցում է, որ իրենից գողանում են գույքը, սակայն ինչ-որ շարժառիթով (վախից) ցույց է տալիս, իբրև ոչինչ չի նկատում: Եթե տուժողը գիտակցում է, որ իրենից գողանում են, սակայն ձեռքնում է, թե չի նկատում, իսկ գողն էլ կարծում է, որ տուժողը չի կռահում արարքը, ապա այդպիսի հափշտակումը մնում է գաղտնի: Պետք է հաշվի առնել նաև սուբյեկտիվ գործոնը: Քաղաքացիների անձնական գույքի գողությունները սուբյեկտիվ առումով բնութագրվում են մեղքի ուղղակի դիտավորության տեսակով՝ ուրիշի գույքին տիրելու շահադիտական նպատակով: Այդպիսի նպատակի բացակայությունը բացառում է գողության հանցակազմը: Գողության բնութագրում հանցագործը ձգտում է հափշտակել որքան կարելի է հանկարծակի, տուժողի համար շնախատեսված ձևով: Հանկարծակի հափշտակումը կարող է դիտվել որպես գողություն միայն այն դեպքում, եթե դա կատարման եղանակներով և գործելու ձևերով աննկատելի է եղել տուժողի և այլ անձանց համար: Իսկ երբ հանկարծակի հափշտակումը կատարվում է տուժողի և ականատեսների համար նկատելի եղանակով և հանցագործը հույս է դնում ոչ այնքան հանկարծակիության, որքան իր գործունեության հանդգնության, զոհի շփոթվածության ու վախի և այն հանգամանքի վրա, որ կողոպտված մարդն իր ֆիզիկական տվյալներով ի վիճակի չի լինի դիմադրել իրեն կամ էլ բռնել, տագնապ բարձրացնել, առյա նման հափշտակումը պետք է դիտվի որպես բացահայտ և որակվի որպես կողոպուտ:

Հափշտակման գաղտնիության օբյեկտիվ հատկանիշի զնահատականը պետք է իր մեջ ներառի ոչ միայն տուժողի կողմից կատարված գործողությունների գիտակցումը, այլև կողմնակի անձանց՝ ականատեսների կողմից օտար գույքի նկատմամբ վերաբերմունքը: Հափշտակումը գաղտնի է համարվում, եթե տուժողը կամ կողմնակի անձինք, թեև լինում են հանցագործության վայրում, սակայն չեն գիտակցում մեղավորի գործողության հակաօրինական բնույթը: Օրինակ՝ եթե մարդը նստում է փողոցում կանգնած մոտոցիկլետը, վարում այն անցորդների ներկայությամբ և կասկած չի առաջանում, որ մոտոցիկլետ վարողը գողություն է կատարում, ապա նման դեպքերում արարքը պետք է որակվի որպես գողություն: Հափշտակումը բացահայտ է համարվում, երբ տուժողը կամ ականատեսները գիտակցում են կատարված հանցագործությունը, իսկ հանցագործն էլ իրազեկ է դրան: Ուրեմն, սուբյեկտիվ շահանիշն էլ գաղտնի և բացահայտ հափշտակության սահմանադրաման հիմքն է:

Իրավաբանական զրականության մեջ և պրակտիկայում գողության ավարտման պահի վերաբերյալ կան տարբեր կարծիքներ: Այսպես, ըստ Գ. Ա. Կրիզերի հափշտակումը պետք է համարել ավարտված միայն այն բանից հետո, երբ հափշտակողը ոչ միայն տիրապետել է գույքին, այլև յուրացրել է այն՝ դրանով ունալ հնարավորություն ստանալով տնօրինելու հափշտակվածը:

իր հայեցողությամբ⁴։ Գ. Ա. Կրիգերը գրում է. «Պնտությանը կամ հասարակական կազմակերպություններին պատճառած վնասը և գրանց հաշվին մեղավորների հարստացումը, որոնք տիրապետել են սոցիալիստական գույքին, այդ երկու հատկանիշները պետք է համարել հանցագործությամբ ավարտված հափշտակում»⁵։ ՍՍՀՄ Գերագույն դատարանի պլենումը 1972 թ. հուլիսի 11-ի № 4 որոշմամբ հիմնականում պաշտպանում է Գ. Ա. Կրիգերի տեսակետը։ Այլ կարծիք է Վ. Ս. Վլադիմիրովը։ Նա գողության ավարտված հանցակազմի համար բնորոշ է համարում հետևյալ երկու պահերի դուգորդումը. 1) գույքի օտարումը օրինական տիրապետողից և 2) մեղավորի կողմից նրա տիրապետումը։ Գ. Ա. Կրիգերը նշվածին ավելացնում է նաև երրորդը՝ հափշտակվածն իր հայեցողությամբ տնօրինելու ունակ հնարավորությունը, այսինքն՝ օտար գույքի փաստական սեփականատեր դառնալը։

Նշված երկու տեսակետներն էլ համուլիշ չեն, քանի որ գողության օբյեկտիվ հատկանիշների շարքում դասում են նաև այնպիսիները, որոնք օրենքով նախատեսված չեն՝ գույքի տիրապետում, և առավել ևս, նրա տնօրինում։ Միութենական հանրապետությունների օրենսդրքերը և ՀՍՀՄ քրեական օրենսգրքի 143 հոդվածը գողությունը բնորոշելիս նշում է ոչ թե գույքի տիրապետում, այլ նրա հափշտակում, այսինքն՝ տուժողի տիրապետումից վերցնումը⁶։

Բացի այդ, դժվար չէ նկատել, որ «տնօրինման տեսության» կողմնակիցները կամա թե ակամա հավասարության նշան են դնում քրեաիրավական իմաստով տիրապետման և տիրապետման տնտեսագիտական ու քաղաքացիա-իրավական հասկացությունների միջև։ Այնինչ, ինչպես իրավացիորեն նկատում են Մ. Ա. Գելֆերը և Վ. Ն. Լիտովչենկոն, «քաղաքացիա-իրավական տիրապետումն այլ կերպ գոյություն չունի որպես տիրապետում՝ կապված գույքի յուրացման, օգտագործման և տնօրինման հետ։ Դա անհրաժեշտ է սեփականատիրոջ, վարձակալի, գույքի պահպանողի և այլնի օրինական լիազորությունների իրականացման համար»⁷։ Սակայն հայտնի է, որ հափշտակողը չի կարող ոչ միայն սեփականատեր դառնալ, այլև՝ հափշտակված գույքի տնօրինող։ Դրա համար էլ քրեաիրավական իմաստով տիրապետման նույնացումը օրինական տիրապետման հետ անհիմն կերպով ընդարձակում է հափշտակության հասկացությունը մինչև անձի կողմից ունակ հնարավորություն ստանալը՝ հափշտակվածը իր հայեցողությամբ տնօրինելու ժամանակի հետ։ Բացի դրանից, եթե «վերցման տեսակետը» չափազանց նեղացնում է մեղադրյալի գործողության հնարավոր կամովին հրաժարման սահմանները, ապա դրան հակառակ՝ «տնօրինման տեսակետը» մեղադրյալին հնարավորություն է տալիս կամովին հրաժարվելու, որը չի բացառվում անգամ հափշտակված գույքը տիրապետելուց հետո։ Միաժամանակ Գ. Ա. Կրիգերի

⁴ Նույն կարծիքին են Լ. Գ. Գաուխմանը, Վ. Ա. Պուկովսկին, Մ. Եֆիմովը և ուրիշներ։

⁵ Г. А. Кригер. Квалификация хищений социалистического имущества, М., 1971, с. 31.

⁶ Միայն էստոնական ՍՍՀ քրեական օրենսգրքին է գողության հանցակազմը բնորոշում որպես քաղաքացիների անձնական գույքի հափշտակում՝ յուրացման նպատակով (139 հոդված)։

⁷ М. А. Гельфер, В. Н. Литовченко, Момент окончания преступления при краже («Социалистическая законность», 1972, № 11, с. 43).

տեսակետը ընդարձակում է հանցագործության ժամանակ հանցակցության սահմանները՝ իր իրավաբանական հետևանքներով հանդերձ:

Վերոգրյալը հաշվի առնելով, գողությունը պետք է ավարտված համարել զույքի օտարման, վերցման պահից, որովհետև տուժողի տիրապետությունից զույքի օտարման փաստով նրան ռեալ գույքային վնաս է հասցվում և տուժողը զրկվում է զույքի նկատմամբ սեփականատիրոջ իր իրավասությունից: Այս հարցում գողի հետագա գործողությունները (զույքի օգտագործումը, վաճառումը, երրորդ անձանց տալը և այլն) էական նշանակություն չունեն: Հափշտակված զույքի տիրապետումը գողության հանցակազմի սուբյեկտիվ կողմն է, գողի գործողության նպատակը:

Ս. Ի. Սիրոտան իրավագիտորեն նշում է, որ «հափշտակումը մեղադրյալի գործողությունն է, որն արտահայտվում է զույքի վերցման մեջ: Տիրապետումը նպատակ է, որն իր առջև է դնում մեղավորը՝ կատարելով այդպիսի վերցնում: Հետևաբար, զույքի վերցման և այն մեղավորին անցման փաստով հանցագործությունը ավարտվում է, իսկ տիրապետումը մնում է հանցակազմի շրջանակներում: Այդպես է, օրինակ, տուժողի բնակարանի պատահանից իրը գուրս նետելը և դրսում գտնվող մյուս հանցակցի կողմից այն վերցնելը կամ՝ տրանսպորտում տուժողի զրպանից դրամապանակի հափշտակումը և անմիջապես մյուս հանցակցին փոխանցելը և այլն:

Հափշտակման ժամանակ երբեմն հանցագործը մոլորվում է զույքի պատկանելիության հարցում: Նման հափշտակության որակման հարցը ճիշտ լուծելու համար անհրաժեշտ է որոշել, թե հանցագործը ի՞նչ զույք է ցանկացել տիրել սոցիալիստական, թե՛ անձնական, ինչի՞ է ուղղված եղել նրա դիտավորությունը: Այս հարցի լուծումը հնարավորություն է տալիս պարզելու կատարված հանցագործության հասարակական վտանգավորության աստիճանը, արարքի իրավաբանական որակման և պատճառված վնասի հատկանիշները: Հետևաբար, զույքի վերցնելը կատարվել պետական կամ հասարակական կազմակերպություններից, սակայն մեղադրյալը դիտավորություն է ունեցել անձնական զույք հափշտակելու, ապա հանցանքը պետք է որակվի որպես անձնական զույքի գողություն: Եթե քաղաքացու անձնական զույքը հանձնված է եղել սոցիալիստական կազմակերպությանը, որի մասին տեղյակ է եղել հանցագործը, ապա այս դեպքում զույքի հափշտակումը պետք է որակել որպես սոցիալիստական զույքի գողություն: Հնարավոր է, որ հանցագործը հափշտակի զույք, չիմանալով, թե դա ո՞ւմ է պատկանում՝ պետությանը, հասարակական կազմակերպությանը, թե՛ քաղաքացուն. այդ դեպքում արարքի իրավաբանական որակումը կախված է այն բանից, թե նա փաստորեն ո՞ւմ սեփականությունը հանդիսացող զույքն է հափշտակել: Եթե անձը սխալմամբ վերցնում է օտար զույքը որպես իրենը, ապա նրա արարքում բացակայում է հանցակազմի Գողության էությունը ուրիշի տիրապետության տակ գտնվող զույքը վերցնելու մեջ է: Հետևաբար, հափշտակության հանցակազմը բացակայում է այն դեպքում, երբ անձը յուրացնում է պատահամբ գտած զույքը: Գողության սահմանազատումը իր գտնելուց կարևոր նշանակություն ունի, քանի որ միութենական հանրապետությունների քրեական օրենսդրությունների մեծ մասը գտած զույքի յուրացման հա-

⁸ С. И. Сирота, Преступления против социалистической собственности и борьбы с ними, Воронеж, 1968, с. 65

մար քրեական պատասխանատվություն չի նախատեսում: Գտած կարող է համարվել միայն այնպիսի իրը, որը դուրս է եկել սեփականատիրոջ տիրապետությունից պատահամբ, անկախ նրա կամքից և աննկատելի նրա կողմից: Այդպիսի դեպքերում անհրաժեշտ է, որ պուլքը վերցնողը չիմանա, թե ով է դրա տիրո և ուսել հնարավորություն չունենա այն վերադարձնելու տիրոջը: Դրա համար էլ, որպես կանոն, գտածը յուրացնելու մասին խոսք չի կարող լինել այն դեպքում, երբ ուրիշի դույրը ժամանակավոր դրված է առանց հսկողության և անգամ, երբ գույքի տերը մոռացել է այն գնացքում, յուրանոցում և այլն: Օրինակ՝ ուղևորի կողմից մոռացված և գնացքում թողնված նամպրուկի վերցնումը նույնպես գողություն է և ոչ թե գտածի յուրացում:

Երբեմն հարց է առաջանում, թե ինչպես որակել ամուսիններից մեկի սուրբքը, որը մյուսից գաղտնի վերցնում և իրացնում է գույքը: Այս դեպքում գողության հանցակազմը բացակայում է, որովհետև ամուսինների համատեղ վաստակած գույքը համարվում է նրանց ընդհանուր սեփականությունը:

Եթե անձը մեկ ուրիշի տնօրինման տակ գտնվող գույքի նկատմամբ ունենում է սեփականատիրական իրավունք և հափշտակում է այն, ուստի իրեն իրականացնելով իր իսկական կամ ենթադրյալ իրավունքը տվյալ գույքի նկատմամբ, ապա նման արարքը պետք է որակել ՀՍՀ քրեական օրենսգրքի 218 հոդվածով որպես ինքնիրավություն և ոչ թե գողություն:

Գողությունն իր օբյեկտիվ կազմով կարող է զուգորդվել անգամ խաբեության հետ, սակայն այդ հանցամասնքը նույնպես չի փոխում արարքի օբյեկտիվ կողմի չիմնական նշանը՝ գաղտնիությունը: Օրինակ, երբ որևէ մեկը խաբում է մեկ ուրիշի, թե ժամանակավորապես կհսկի նրա գույքը, բայց իրականում հափշտակում է այն, օգտվելով նրա տիրոջ ժամանակավոր բացակայությունից, կատարվածը միևնույն է, ըստ էության գողություն է, ոչ թե խաբախություն կամ կողոպուտ: Այսպես խաբեությունը միջոց է նպատակին՝ գույքի գաղտնի հափշտակմանը հասնելու համար:

Դրությունը մի փոքր բարդանում է, երբ դրվում է եկեղեցիներին պատկանող գույքի նկատմամբ կատարվող հանցագործությունների քրեաիրավական որակման հարցը: Սեր կարծիքով այն արժեքները, որոնք պետականացված են, սակայն թողնված են եկեղեցիներին՝ օգտագործման իրավունքով, դրանց հափշտակումը պետք է որակվի որպես սոցիալիստական գույքի գողություն, իսկ չպետականացված գույքերի ու արժեքների (հոգևոր սաների հագուստի, նրանց բնակարանային իրերի և այլնի) հափշտակումը ենթակա են որակման իբրև քաղաքացիների անձնական գույքի գողություն:

Գողությունը հասարակական մեծ վտանգավորություն է ներկայացնում առկապես որակյալ հասկանիչների առկայությամբ կատարվելու դեպքում: ՀՍՀ քրեական օրենսգրքի 143 հոդվածի 2-րդ մասը դրանց շարքին է դասում կրկնակիությունը, իմբակային եղանակով կատարելը և զգալի վնաս պատճառելը, իսկ ՌՍՖՍՀ-ի և մի շարք այլ հանրապետությունների քրեական օրենսդրությամբ՝ նաև տեխնիկական միջոցների կիրառումը: Գողությունը կրկնակի է համարվում այն դեպքում, երբ նրան նախորդել է ներքոհիշյալ հանցագործություններից որևէ մեկի կատարումը՝ բանդիտիզմ (72 հոդված), պետական կամ հանրային, կամ քաղաքացիների անձնական գույքի հափշտակում ցանկացած ձևով (88 և 146 հոդվածներ), քաղաքացիների անձնական

գույքի զոդություն (143 հոդված), կողոպուտ (114 հոդված), խարդախություն (147 հոդված)։ Յու. Յուշկովը գտնում է, որ զոդությունը կրկնակի չի կարող դիտվել, և թե առաջին անգամ կատարված զոդության վերաբերյալ նյութերը ուղարկվել են րենկերական դատարանին կամ քրեական դործը կարճվել է ներման ակտով⁹։ Նման տեսակետը սխալ է և հակասում է գործող օրենսդրությանը՝ մասնավորապես ՀՍՍՀ քրեական օրենսգրքի 145 հոդվածին (ՌՍՖՍՀ-ի քրեական օրենսգրքի 144 հոդվածի ծանոթություն), որտեղ ուղղակի նշված է բաղադրանքների անձնական գույքի կրկնակի զոդության հասկացության էությունը։ ՀՍՍՀ քրեական օրենսգրքի 145 հոդվածից բխում է, որ զոդությունը կրկնակի ճանաչելիս չի պահանջվում, որպեսզի առաջին անգամ կատարված զոդության համար սուբյեկտը դատարանի դատավճռով դատապարտված լինի, այլ դրա համար բավական է այն փաստը, որ սուբյեկտը նախկինում կատարած լինի քրեական օրենսգրքի 145 հոդվածում նշված որևէ հանցագործություն։ Կրկնակիության համար նշանակություն չունի, թե դրան նախորդող կամ վերջին հանցագործությունը ավարտված է, թե՞ համարվել է հանձնափորձ կամ հանցագործության նախապատրաստություն։ Մի քանի անձանցից միաժամանակյա հափշտակումը կրկնակիության հատկանիշ չի կազմում։ Օրինակ՝ տարբեր անձանց պատկանող վերարկունների միաժամանակյա հափշտակումը պետք է որակել որպես մեկ զոդություն։

Գողությունը որակյալ է դառնում նաև այն դեպքում, երբ կատարվում է նախապես համաձայնեցված խմբի կողմից։ Պարզ է, որ խմբակային զոդությունը խոսում է խոշոր չափերի վնասի կամ ավելի բարդ գործողություն կատարելու հնարավորության մասին։ Գողությունը, որի հետևանքով զգալի վնաս է պատճառվել տուժողին, առավել հասարակական վտանգավորություն է ներկայացնում։ Դրանով ոչ միայն սեփականատիրոջ նյութական վիճակն է ծանրանում, այլև հանցագործը ձեռք բերելով զգալի գույքային արժեքներ, հնարավորություն է ստանում երկար ժամանակ ապրելու ուրիշի աշխատանքի հաշվին։

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1947 թ. հրամանագրով զոդության այս հատկանիշը որակյալ չէր համարվում։ 1958 թ. քրեական օրենսդրությամբ այս հարցը կարգավորվեց, բայց, մեր կարծիքով, որոշ թերություններով։ Այսպես, մի շարք հանցակաղմերի մեջ շոշափելով վերահիշյալ հատկանիշը, օրենսդիրը միաժամանակ չի բացահայտում նրա բովանդակությունը և չի վկայակոչում տուժողին պատճառված վնասի այն չափը, որից բարձր պետք է դիտել որպես զգալի վնաս։ Դրա հետևանքով քննչական և դատական մարմինները այս հանգամանքին շատ դիպքերում պատշաճ ուշադրություն չեն դարձնում կամ էլ չեն կողմնորոշվում։ Ընդհանրապես, դատական պրակտիկայում ընդունված է զգալի վնաս համարել 100 ռ. և դրանից բարձր գումարային արտահայտությամբ կատարված զոդությունը։ Մենք ևս այն կարծիքին ենք, որ 100 ռուբլին և դրանից բարձր գումարը պետք է զգալի վնաս համարել։ Սակայն դա չի նշանակում, թե 100 ռուբլուց ցածրը չպետք է զգալի վնաս համարել, բանի որ «զգալի վնասի տակ պետք է դիտել ամբողջ գույքի կամ նրա զգալի մասի, կամ էլ առավել թանկարժեք իրեր»

⁹ Ю. Ю ш к о в, Повторность как квалифицирующий признак преступления («Социалистическая законность», 1977, № 2, с. 38).

րի, ինչպես նաև ոչ մեծ արժեք ներկայացնող, բայց տուժողի համար էական նյութական դժվարություններ առաջացնող իրերի հափշտակումը¹⁰։ Մնացած դեպքերում ղզալի վնասի չափը պետք է որոշել, նկնելով տուժողի գույքային վիճակից, գույքի արժեքից, զոդացվածի բնույթից և չափից, աշխատավարձի չափից և գործի այլ հանգամանքներից։ Օրինակ՝ այլ բան է 100 ուրբու գողությունը նյութապես ապահովված մարդուց և այլ բան՝ 20 կուպեկի արժողությամբ դեղի հափշտակումը, որը տուժողի առողջության համար կարևոր նշանակություն ունի։ Ընդհանրապես, բուժման, գործուղման, տուրիստական ուղևորության մեջ գտնվող քաղաքացիներից կատարված գողության (անկախ գույքի արժեքից) ղզալի չափ լինելու հարցը որոշելիս պետք է հաշվի առնել, որ նման դեպքերում 100 ո. սահմաններից շանցնող վնասն էլ ղզալի է, նյութական մեծ դժվարություններ է առաջացնում օտար վայրում գտնվողի համար։ ՀԱՍՀ բրեական օրենսգրքի թերություններից է նաև այն, որ խոշոր չափերի հասնող անձնական գույքի գողությունը որակյալ հանգամանք չի համարվում, ինչպես այդ նախատեսված է պետական կամ հասարակական գույքի հափշտակության դեպքում (բրեական օրենսգրքի 86 հոդվածի 3-րդ մաս)։ Դրա հետևանքով ղողացողը, առավել ևս փորձառու գողը, քաջ գիտակցում է, որ միևնույն պատիժը պետք է ստանա թե՛ 100 ուրբուց բարձր դրամարի գողության դեպքում, թե՛ 20000 ուրբու։ Մեր կարծիքով, օրենսդիրը պետք է լուրջ ուշադրություն դարձնի այս հանգամանքի վրա և խոշոր չափերով կատարված գողության համար ավելի խիստ պատիժ սահմանի, որը, անկասկած, կնպաստի գողությունների դեմ տարվող պայքարի արդյունավետությանը։

Տեխնիկական միջոցների կիրառմամբ կատարված գողությունը որպես որակյալ հատկանիշ ընդունում են միայն ԽՍՀՄ-ի (150 հոդվածի 2-րդ մաս), Վրացական (150 հոդվածի 2-րդ մաս) և Տաջիկական (154 հոդվածի 2-րդ մաս) հանրապետությունների բրեական օրենսդրությունները։ Մյուս հանրապետությունների, այդ թվում և Հայկական ՍՍՀ բրեական օրենսդրությամբ տեխնիկական միջոցների կիրառմամբ կատարված գողությունը որակյալ հատկանիշ չի դիտվում։ Սա բրեական իրավունքի վիճելի հարցերից է, որը, մեր կարծիքով, պետք է նախատեսել, որովհետև գողություն կատարելու ժամանակ հանցագործը օգտագործելով տեխնիկական միջոցներ, դրանով բարձրացնում է իր գործողությունների վտանգավորության աստիճանը և հնարավորություն ստանում հափշտակելու առավել արժեքավոր իրեր և առարկաներ։ Տեղին է նշել, որ 1977 թ. հանրապետությունում արձանագրված գողությունների 56,3 տոկոսը կատարվել է տեխնիկական միջոցների կիրառմամբ։ Շատ դեպքերում հանցագործը կամ հանցագործ խումբը նախապես պատրաստել են տեխնիկական միջոցներ։ Հետևաբար, այդպիսի գողությունը վկայում է հանցագործի համառության և հանրության համար առավել վտանգավորության մասին, Գողության կատարման համար հանցագործները հաճախ օգտագործում են ավտոմեքենաներ և տրանսպորտի այլ միջոցներ։ Տեխնիկական միջոցների կիրառումը գողության որակյալ հատկանիշ պետք է դիտել միայն

10 «ՍՍՀՄ Դերագույն դատարանի բյուլետեն», 1972, N 4, հ. 13։

այն դեպքում, երբ դրանք կիրառվել են մինչև դողությունը կամ դողության ընթացքում և ոչ թե այն ավարտելուց հետո: Օրինակ՝ ավտոմեքենայի օգտագործումը հափշտակված իրերը թաքցնելու համար շի կարող դիտվել որպես տեխնիկական միջոցների կիրառում, բանի որ տրանսպորտի միջոցը կիրառվել է դողությունն ավարտելուց հետո: Տեխնիկական միջոցների կիրառումը որպես դողության ծանրացուցիչ հատկանիշ դիտելը և ՀՍՍՀ քրեական օրենսգրքի 143 հոդվածի 2-րդ մասում այն նախատեսելն անվիճելիորեն կնպաստեն քաղաքացիների անձնական դույքի դողության դեմ քրեաիրավական պայքարի արդյունավետության բարձրացմանը:

ՀՍՍՀ քրեական օրենսգրքի 143 հոդվածի 3-րդ մասն առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստի կողմից կատարված դողության համար պատիժ է սահմանում շորսից մինչև տասը տարի ժամանակով ազատազրկում: Գողությունն այդ հատկանիշով որակելու համար անհրաժեշտ է, որ մինչև տվյալ հանցագործությունը կատարելն անձը դատարանի դատավճռով ճանաչվի որպես առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստ: Չի կարելի միաժամանակ և՛ անձին ճանաչել հատկապես վտանգավոր ռեցիդիվիստ, և՛ նրա հանցագործությունը որակել ՀՍՍՀ քրեական օրենսգրքի 143 հոդվածի 3-րդ մասով: Առանձնապես վտանգավոր ռեցիդիվ է դրսևորվում, երբ հանցագործության սուբյեկտը պատիժը կրելուց հետո կամ պատիժը կրելու ընթացքում կրկին կամ բազմիցս կատարում է այնպիսի ծանրագույն հանցագործություններ, որոնց սպառիչ թվարկումը տալիս է ՀՍՍՀ քրեական օրենսգրքի 23¹ հոդվածը:

Չափազանց կարևոր է այս օրենքի այն ցուցումը, որ անձին առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստ համարելիս հիմք չի կարող ծառայել այն հանցագործության համար դատվածությունը, որ նա կատարել է մինչև 18 տարեկան դառնալը կամ այն դատվածությունը, որը վերացվել, կամ մարվել է օրենքով սահմանված կարգով:

Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը մեծ ուշադրություն են դարձնում մեր երկրի աշխատավորների բարեկեցության բարձրացմանը և նրանց դույքի համակողմանի պաշտպանությանը: Սովետական իրավունքը պարունակում է քաղաքացիների անձնական գույքի պաշտպանությունը երաշխավորող միջոցների հուսալի սիստեմ: Սոցիալիստական իրավունքի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն ոչ միայն պատասխանատվություն է սահմանում քաղաքացիների անձնական գույքի դեմ ուղղված ոտնձգությունների համար, այլև միջոցներ է նախատեսում կանխելու կամ վերացնելու այդ հանցագործությունները: Այս խնդրի հաջող լուծումը կախված է սոցիալիստական օրինականության խստիվ պահպանումից: Օրինականության ամրապնդումը և արմատավորումը արդի ժամանակաշրջանում կենսական անհրաժեշտություն է: Այս տեսակետից խիստ կարևոր է հանցագործությունների ճիշտ որակման հարցը, որը վիթխարի նշանակություն ունի անձի իրավունքների ու շահերի ռեալ ապահովման համար:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ЮРИДИЧЕСКОЙ КВАЛИФИКАЦИИ
КРАЖИ ЛИЧНОГО ИМУЩЕСТВА ГРАЖДАН

АНАТОЛИЙ АВАКЯН

Резюме

Кража личного имущества граждан продолжает занимать значительное место среди всех совершаемых в республике преступлений. В следственно-судебной практике допускаются факты неправильной юридической квалификации деяний, посягающих на личное имущество граждан.

В отдельных случаях кроме имущества предметом кражи могут быть документы на предъявителя. Изъятие номерных знаков и документов, дающих право на имущество (багажная квитанция, номерок из гардероба), на наш взгляд, является не кражей, а приготовлением к мошенничеству. Похищение документов, не имеющих имущественной ценности (паспорт диплом и др.), не может квалифицироваться как кража личного имущества граждан. Кражей является и похищение личного имущества граждан, совершенное в присутствии владельца, в случае, если последний в силу стечений обстоятельств не мог осознать совершившееся (похищение имущества у пьяного, у душевнобольного, у малолетнего и т. д.). Одномоментное похищение сразу у нескольких лиц имущества не может рассматриваться как повторная кража. Состав кражи следует считать оконченным в момент, когда преступник изъят чужое имущество. Следует считать недостатком УК Арм. ССР то обстоятельство, что использование технических средств при похищении не относится к объективным признакам, квалифицирующим кражу личного имущества граждан. В целях более четкой дифференциации ответственности и индивидуализации наказания следует дополнить перечень особо отягчающих обстоятельств кражи (ч. 3, ст. 143 УК) указанием на ее совершение с причинением потерпевшему особо значительного ущерба.